իւր երախտագիտութիւնը։ Բնաւ չի մոռցաւ այն բարի ապակեգործ կինը որ իր տղայութեանը խնամք տարաւ. իր գիտութիւնները աւարտելէն ետքը, դարձաւ իր մօրուին քով, որուն հետ ինչուան իր երեսուն տարուան հասակը մէկտեղ կը բնակէր, բայց երկայն հիւանդութենէ մը վերջը, բժշկին խրատովը ստիպուեցաւ անկէ լաւ և առողջարար բնակութիւն մը փնտռելու։ Իր ոտոյդ մայրը, որ անգթութեամբ զինքը երեսի վրայ ձգած էր, անոր հանճարը իմանալով, ուզեց զայն նորէն իրեն որդի ճանչնալ, և ուզեց զինքը իր տունը առնել. վասն զի շատ բարեբաղդ վիճակի մը մէջ էր և հանգիստ կրնար պահել զինքը, բայց Տ՝ Ալամպեր փառախնդիր չըլլալով, ըսաւ որ ինքը իրեն մայր այն ապակեգործ կինը կը ճանչնայ, ուստի մերժեց անոր մայրութիւնը։

Այս համեստութիւնը իր փառքը շատ աւելցուց. երբոր Ռուսիոյ կայսրուհին իր տղուն՝ Ռուսիոյ մեծ իշխանին դաստիարակութիւնը իրեն առաջարկեց, հարիւր հազար ֆրանգ թոշակ կապելով, հանդերձ այլ ամենայն կարևոր ծախքերն ընելու, Տ՝ Ալամպեր թէպէտ և այս բանս իրեն մեծ պատիւ սեպեց, բայց մերժեց կայսրուհւոյն այս պատուաւոր և դժուարին խնդիրը։ Կայսրուհին շատ ստիպեց, մանաւանդ իր ձեռքովը նամակ մըն ալ գրեց, բայց այս երկրորդ փորձն ալ անօգուտ եղաւ. և Տ՝ Ալամպեր մնաց իր հայրենիքը. վասն զի հանդերձ իր ամենայն գիտութեամբը կը ճանչնար նաև որ ինքը կայսերութեան մը սահմանուած իշխան մը կըրթելու պէտք եղած ամեն ձիրքերն չունէր։

Այսօր որ Տ՝ Ալամպեր ալ դժբաղդաբար իր դարուն ամբարիշտ և անկրօն փիլիսոփայից սկզբանցը մասնակից եղաւ։ Մեռաւ 1783ին, 66 տարեկան։

## Կաշիէ ոտքի ամանները դիւրաւ թրջելէն ազատ պահելու հնարք.

Անոնք որ սովորութիւն ունին երկայն ատեն ջրոտ տեղուանք՝ կամ նոյն իսկ ջուրի մէջ կենալ կամ քալել, և կ՝ուզեն որ ոտքերնին չի թրջի, կրնան իրենց ուզած նպատակներնուն հասնիլ՝ թէ որ հետևեալ բաղադրութեամբ կօշիկնին օծելու ըլլան։

| | | |
|---|---|---|
| Առ խոզի ճարպ | 6 | չափ |
| Ռետին | 1 | չափ |
| Դեղին մոմ | 1 | չափ |
| Զէթ | 1 | չափ |

ասոնք ամենը մէկտեղ հալեցընելէն ետև՝ լաւ մը խառնէ որ իրարու հետ աղէկ մը զանգուին. ետքը ուզած ոտքի ամաններդ թեթև մը տաքցնելէն ետև օծէ այս բաղադրութեամբ այնպէս որ կաշին լաւ մը ծրծէ այս նիւթը։ Օծելէդ վերջը՝ կօշիկները մէկէն պէտք չէ գործածել՝ այլ այնպէս թողու է գոնէ 12 ժամ. անկէ ետքը թէպէտ կաշին կը պնդանայ, բայց հազնելէն քիչ վերջը՝ ոտքի բնական տաքութեամբը կակղնալով ամենևին ոտքը չեն նեղեր։

Եթէ մէկը այս բաղադրութեամբ օծուած ոտքի ամաններ հագնելու ըլլայ՝ կրնայ ամբողջ օր մը ջուրերու մէջ քալել՝ առանց ամենևին ոտքը թրջուելու։

## Ընկոյզը թարմ պահելու կերպ.

Ընկոյզը աղէկ մը հասնելէն ետև՝ ժողուէ խնամքով, և առանց ատեն անցընելու դիր չոր աւազի տակ, բայց նայելու է որ զով տեղ ըլլայ. այս կերպով տարի մը ամբողջ կրնաս թարմ ընկոյզ ունենալ։

---

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ